

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67
Ե 540

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻՆ**

**Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը
Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան**

**Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան**

**Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսա-
կան կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝
Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:**

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանա-կությանը, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակու-յամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այն-պես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կա-րող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակի-րառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հե-տաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Հեղ. խումբ, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիզեն Քոչարյան

“PERINCEK V. SWITZERLAND” գործով ՄԱԲԴՈՒԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՈՒԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ5

Լևոն Գևորգյան

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ
ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ18

Անի Միմոնյան

ԶԱՐԳԱՅՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ25

Արթուր Վաղարշյան

ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ35

Տարոն Միմոնյան

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ56

Ալվարո Ալեքսանյան

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ68

Նարինե Դավթյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԻ ՓՈԽԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ87

Գևորգ Դանիելյան

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ98

Վարդան Այվազյան

ԿՈՆՍՏԻՏՈՒՅԻՆՆԱԼԻԶՄԻ (ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 124

Անահիտ Մանասյան

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 140

Արա Գաբուզյան

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԱՂԲՅՈՒՐ 149

Սամվել Դիրանյան

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 160

Аида Искоян

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА:
МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ 174

Գրիգոր Բեքմեզյան

ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ 190

THE PROBLEMS OF THE CONCEPT OF “LAW IMPLEMENTATION” IN THE CONTEXT OF LEGAL REGULATION PHASE SYSTEM AND REALIZATION FORM OF STATE FUNCTIONS.

Narine Davtyan
Assisting professor at the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

From the point of view of right and law differentiation conception, the “Law implementation” notion acquires new contents, as well as law implementation new forms come to light. Among the all kind of legal theoretical institutions, the legal regulation structure is much more complete, minutely reflects the process of legal regulation, law formation, law activity. The discussion of “Law implementation” notion in phase system of legal regulation structure, gives an opportunity to bring forward and justify the notion of “Law implementation structure”. Such approach also certifies the observation of law implementation in context of legal forms of realization of contemporary state functions. As a result, theoretical chance occurs to justify new legal notion, i.e. “law implementation legal structure”, the components of which are the transformation of law (essence) into a positive law (form) and implementation of positive law (fulfillment) in public relations.

Բանալի բառեր՝ իրավունքի կենսագործում, իրավական կարգավորման կառուցակարգ, իրավական կարգավորման փուլ, պետության գործառնությունների իրավական ձևեր, իրավունքի կենսագործման կառուցակարգ:

Ключевые слова: реализация права, механизм правового регулирования, стадия правового регулирования, правовые формы осуществления функций государства, механизм реализации права.

Key words: Law implementation, mechanism of legal regulation, phase of legal regulation, legal forms of state functions, mechanizm of law implementation.

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՅՆՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Գևորգ Դանիելյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
«Սահմանադրական իրավունքի կենտրոն» Հ/Կ խորհրդի նախագահ,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սույն հետազոտության շարժառիթը, այսպես կոչված, *հանրային նշանակության գործունեություն* իրականացնող, հատկապես՝ շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում ֆիզիկական և իրավաբանական անձանց սահմանադրական իրավունքների ողջամիտ պաշտպանության համակարգի ձևավորման արդիական խնդիրն է: Ներկայումս գիտագործնական շրջաններում հաճախ է խոսվում այն մասին, որ հիշյալ կազմակերպությունների կորպորատիվ կառավարման համակարգը, որին հանգամանորեն և գիտական անհրաժեշտ մակարդակով անդրադարձել են ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական իրավագետները¹, երբեմն առանձնանում է այնպիսի ցայտուն բյուրոկրատական բաղադրիչներով, որպիսիք չեն հանդիպում անգամ պետական ապարատում:

Բնակաբար, այսպիսի իրավիճակը չէր կարող չանդրադառնալ քաղաքացիների իրավունքների ու պաշտպանության արդյունավետության վրա: Գիտագործնական շրջանակներում, որպես կանոն, առավել արդիական է համարվում պետական մարմինների համա-

¹ Այս թեմայով նույնիսկ պաշտպանվել է դոկտորական ատենախոսություն, որի հեղինակն է հայ իրավագետ Վ.Ավետիսյանը: Առավել հանգամանորեն այդ հարցադրումներին կարելի է ծանոթանալ վերջինիս հետևյալ մենագրությունում՝ Վ.Գ. Ավետիսյան, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով) - Երևան: ԵՊՀ հրատարակչություն, 2013 – 400 էջ:

կարգում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդիրը, մինչդեռ՝ մարդկանց ծառայություններ մատուցող տարաբնույթ կազմակերպություններ, որոնք առավել հաճախ են շփվում մեծաքանակ անձանց հետ, ըստ էության, դուրս են մտում պատշաճ ուշադրությունից: Տվյալ դեպքում իրեն զգացնել է տալիս իներցիայի ուժով գերիշխող այն տեսակետը, ըստ որի՝ մարդկանց իրավունքների և ազատությունների պաշտպանության կարիքը, հատկապես մեծ է այն համակարգում, որն օժտված է մարդկանց վարքագծի վրա անմիջականորեն ազդելու իշխանական լծակներով, այսինքն՝ հիշյալ մտավախությունը նկատելի է գործադիր իշխանության մարմինների առնչությամբ: Ընդ որում, այս մտայնությունը դարձել է գերիշխող նաև այն հիմքով, որ խորհրդային իրավական համակարգում մի տեսական շրջան հանրային ծառայություններ իրականացնող մարմինները, ըստ էության, եղել են պետական մարմինների կարգավիճակով օժտված սուբյեկտներ՝ «պետական ձեռնարկություններ»: Վերջիններս ձևական հիմքերով ևս պայմանագրեր էին կնքում քաղաքացիների հետ, սակայն հասկանալի պատճառով դրանք ընդհանուր ոչինչ չունեին գործարքի կողմին բնորոշ կարգավիճակի հետ: Բացի այդ, նշված կազմակերպությունները գտնվում էին գործադիր իշխանության համապատասխան մարմինների անմիջական ենթակայության ներքո, ինչը երաշխավորում էր դրանց իրավական ակտերի, գործողության կամ անգործության վերադասության, վարչական կարգով վիճարկման ընթացակարգերի առկայություն:

Ներկայումս, ազատ տնտեսական հարաբերությունների պարագայում իրատեսական չէ նույն այդ կազմակերպությունների կտրվածքով խոսել վարչական կարգով իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին, քանզի իրավաչափ չի կարող համարվել տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ ընդհանուր հսկողությունն ու պետական որևէ մարմնի կողմից անհիմն միջամտությունը:

Նկատենք, որ «հանրային» եզրույթը տարբեր հոլովաձևերով արդեն լայն կիրառում ունի հայրենական օրենսդրությունում, սակայն այն բովանդակային կտրվածքով դեռևս անհրաժեշտ միասնականություն ձեռք չի բերել: Այսպես, դրանք տարբեր իմաստով մոտ, սակայն տարբերակված են օգտագործված «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով և այլն, ինչին կանդրադառնանք ստորև:

Բայց, եթե ներկազմակերպական հարաբերություններում դրսևորվող բյուրոկրատիան անմիջականորեն չի ներգործում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավական կարգավիճակի վրա¹, ապա նույնը չի կարելի ասել այդ բյուրոկրատական գործոններով պայմանավորված արդեն արտաքին ներգործության տիրույթում ձևավորվող հարաբերությունների առնչությամբ: Բնական է, որ կորպորատիվ հարաբերություններում բյուրոկրատական համակարգին նախապատվություն տալն անխուսափելիորեն իր կնիքն է դնում նույն այդ կազմակերպության արտաքին ներգործության հարաբերությունների վրա. դա դրսևորվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ քաղաքացիաիրավական հարաբերություններում քաղաքացիական իրավունքի այնպիսի ճանաչված ու առանցքային նշանակություն ունեցող սկզբունքների անտեսմամբ, ինչպիսիք են՝ քաղաքացիական հարաբերության մասնակիցների հավասարությունը, պայմանագրի ազատությունը և այլն:

¹ Տվյալ դեպքում, ինչ խոսք, նշված կազմակերպություններում աշխատող անձինք ևս գտնվում են խոցելի վիճակում, քանզի առնվազն իրենց աշխատանքային իրավունքների պաշտպանության կտրվածքով հանդիպում են էական խոչընդոտների, սակայն սույն հոդվածը նվիրված է այն քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանությանը, որոնք հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ գտնվում են բացառապես քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ:

Հիշյալ կազմակերպությունների հետ քաղաքացիների առնչությունն անխուսափելի է (վերջին հաշվով, խոսքը նաև կենսական նշանակություն ունեցող կոմունալ-կենցաղային ծառայություն մատուցելու մասին է), սակայն այդ կազմակերպությունների հետ հարաբերություններում ոչ միայն իրատեսական չէ խոսել փաստացի իրավահավասարության, պայմանագրային ազատության սկզբունքներով առաջնորդվելու, այլև խախտված իրավունքների վերականգնման ողջամիտ երաշխիքների մասին: Մի կողմ թողնենք կոռուպցիոն ռիսկերը, բավարարվենք միայն այն փաստարկներով, որ հիշյալ կազմակերպություններն օժտված են վարչական բնույթի ներուժով, իրենց տիրապետման տակ է գտնվում անհամեմատ լայն շրջանակներ ընդգրկող տեղեկատվություն, դրանց շահերը պաշտպանում են արհեստավարժ, բարձր վարձատրվող իրավաբաններ և այլն:

Բավարար ու համարժեք են արդյոք վերը նշված հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության ներկայիս իրավական կարգավորումները, դրանք չէ՞ն հանգեցնում սահմանադրաիրավական կարգավորումների էության խաթարմանը, կարո՞ղ ենք վարչարարության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց պաշտպանության իրավական եղանակները կիրառելի համարել նաև նշված հարաբերություններում: Այս և նմանաբնույթ հարցերին փորձենք պատասխանել ստորև արտացոլվող վերլուծության արդյունքներով:

Նշված հիմնախնդրի իրավաչափ լուծմանը խոչընդոտում են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության առնչությամբ վերջին շրջանում սկիզբ առած անհարկի ծայրահեղ մոտեցումները: Անդրադառնալով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրին, շատերն անթաքույց այն պարզունակ թեզն են առաջադրում, ըստ որի՝ մարդու իրավունքներն ու ազատությունները ենթադրում են *պարտականություններ* միայն պետության համար: Առանձին իրավագետներ հանդես են ե-

կել հրապարակային ելույթներով, որոնցում քննադատելով, օրինակ, Մահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ընդգծել են այն գաղափարը, ըստ որի՝ Մահմանադրական դատարանի կողմից որպես ելակետ ճանաչված իրավական դիրքորոշումների համաձայն՝ մարդու իրավունքների ու ազատությունների առնչությամբ իբր հավասարապես պարտականություններ ունեն ինչպես պետությունը, այնպես էլ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք¹:

Վերը նշված հարցադրման առնչությամբ համարժեք գնահատման պարագայում պարզ կդառնար, որ պետության դեպքում Մահմանադրական դատարանը հիմք է ընդունել ակնհայտ լայն բովանդակությամբ պարտավորություն, ըստ որի՝ պետությունը ոչ միայն պարտավոր է չխախտել անձանց իրավունքներն ու պարտականությունները, այլև Մահմանադրությամբ ամրագրված սահմաններում պաշտպանել ու երաշխավորել դրանք: Երբ ընդգծում ենք, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով, ապա դա բնավ չի նշանակում, որ պետությանը սուսկ վերապահված է անձանց իրավունքները չխախտելու պասիվ դերակատարում: Ճիշտ հակառակը, պետությունը դրանով իսկ պարտավորվում է իր գործառույթներն իրականացնել այնպիսի եղանակներով, որոնք կհանգեցնեն այդ իրավունքների ու ազատությունների համակողմանի իրացմանն ու պաշտպանությանը: Ֆիզիկական և իրավաբանական անձինք արդեն այդպիսի պարտավորություն չունեն, վերջիններս սուսկ չպետք է խախտեն ուրիշների իրավունքները, սակայն նրանք պարտավոր չեն իրենց միջոցներով երաշխավորել այլոց իրավունքների ու ազատությունների իրացումը:

Ցավոք, հանրային նշանակության գործունեություն իրականացնող ոչ պետական կազմակերպությունների դեպքում, թերևս,

¹ Տե՛ս, օրինակ, Գոռ Հովհաննիսյանի ելույթը: <http://www.youtube.com/user/Lragiram>:

տարածման միտում ունի այն թյուր տեսակետը, ըստ որի՝ մարդկանց իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից լավագույն եղանակը նշված կազմակերպություններին պարզապես վարչական մարմին համարելն է. ենթադրվում է, որ այդպիսով ինքնըստինքյան կլուծվեն բոլոր մյուս իրավական խնդիրները: Ի սկզբանե նկատենք, որ այսպիսի դիրքորոշումը խիստ խոցելի է, այն ոչ միայն չի լուծում սովյալ ոլորտում կուտակված խնդիրները, այլև առաջացնում է նոր հիմնախնդիրներ, որոնք արդեն առաջադրված համակարգի պայմաններում դառնում են անլուծելի: Վերջին հաշվով, ակնհայտ սխալ ուղղությամբ ընթացող իրավաստեղծ գործունեությունն ու իրավակիրառ պրակտիկան կանխելու փոխարեն նախապատվությունը, ցավոք, տրվում է անհարկի տարածում ստացած այն մոտեցմանը, որի էությունը հանգում է ձևավորված ոչ իրավաչափ համակարգին օրինական տեսք հաղորդելուն:

«Վարչարարություն» եզրույթը բացառապես առնչվում է իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող արտաքին այնպիսի գործունեությանը, որի արդյունքում անձանց համար առաջանում են փաստական հետևանքներ. հենց այս մեկնակետն է դրված նաև «Վարչարարության հիմունքների և վարչարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիմքում, որով վարչարարությունը մեկնաբանվում է, որպես. «... վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ»: Ընդ որում, «վարչարարություն» եզրույթը վարչական իրավունքի տեսության մեջ երբեմն օգտագործվում է ավելի լայն իմաստով, վերջինիս տակ նկատի է առնվում գործադիր իշխանություն իրականացնելիս վարչական մարմնի կամ գործադիր իշխանություն իրականացնելու դեպքում ցանկացած այլ պետական

մարմնի նաև այնպիսի գործունեություն, որն ուղղված է նաև ներքին համակարգային խնդիրների լուծմանը¹:

Ինչևէ, վերոհիշյալ բնորոշումից բխում է, որ հայրենական իրավական համակարգը վարչարարության սուբյեկտ է ճանաչում բացառապես վարչական մարմիններին, որպիսիք, ըստ նշված օրենքի, գործադիր իշխանության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ են:

Իրավագետների մի հատված հակված է այն տեսակետին, որ վարչական մարմիններ են և, բնականաբար, վարչարարություն են իրականացնում նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունները: Այս տեսակետի հիմքում ընկած է այն դիտարկումը, ըստ որի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը, որը վարչապետի ներկայացմամբ Մահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն սահմանվել է Հանրապետության Նախագահի հրամանագրով, նախատեսում է, որ նախարարության համակարգի մեջ կարող են մտնել նաև նախարարության ենթակայությանը հանձնված «պետական ոչ առևտրային կազմակերպությունները»: ... Ոչ առևտրային կազմակերպությունների մասին դրույթներ է պարունակում Քաղաքացիական օրենսգիրքը: Այնտեղ նրանք իրենց իրավաբանական անձանց են ներկայացնում (գլուխ 5, ջ, հոդված 122-127)», սակայն Քաղաքացիական օրենսգիրքը դրանց թվին է դասում միմիայն հասարակական միավորումները, հիմնադրամները և իրավաբանական անձանց միությունները²:

¹ Առավել հանգամանորեն այս հարցադրումը վերլուծված է հեղինակի հետևյալ աշխատությունում. Գ.Դանիելյան, Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ / Երևան: Տիգրան Մեծ, 2011, էջ 26:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք / խմբ. Հ.Թովմասյան, Օ.Լուխթերհանդթ, Գ.Մուրադյան, Վ.Պողոսյան, Վ.Ռայմերս, Ռ.Ռուբել. - Եր.: Բավիդ. 2011, էջ 112:

Նկատենք, որ պետական ոչ առևտրային կազմակերպությունները վարչական մարմիններ համարելն առնվազն հակասում է Մահմանադրության 2-րդ հոդվածին, որում հստակ ու սպառիչ սահմանված են ժողովրդի կողմից իշխանություն իրականացնելու իրավասու սուբյեկտները: Ինչ վերաբերում է «նախարարության համակարգի մեջ» արտահայտությանը, ապա այն բնավ չի ենթադրում, որ ՊՈԱԿ-ներն ինքնաբերաբար ձեռք են բերում պետական մարմնի կարգավիճակ, մանավանդ որ որևէ իրավական ակտով ամրագրված չէ, թե ինչ կարգավիճակ է ենթադրում այս կամ այն նախարարության համակարգի մեջ գտնվելը: Ընդ որում, գործող օրենսդրությունը ևս ելակետ չի ընդունում այն, որ նախարարության համակարգի մեջ գտնվելու փաստը հավասարագոր է պետական իշխանությամբ օժտված մարմին համարվելուն, այլապես ստուգումների վերաբերյալ օրենսդրությունը չէր նախատեսի ՊՈԱԿ-ներում ստուգումների այնպիսի ընթացակարգ, որը բացառապես բնորոշ է բաժնետիրական ընկերություններին: Վերջին հաշվով, «պետական մարմնի համակարգի մեջ» գտնվելը զուտ պայմանական, իրավական կոնկրետ բովանդակություն չարտահայտող ձևակերպում է: Հավելենք, որ քաղաքացիական օրենսդրությունը տվյալ դեպքում վկայակոչելը ևս տեղին չէ, քանզի ՊՈԱԿ-ները՝ որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական ձևի կազմակերպություններ, ընդհանրապես ծանոթ չեն քաղաքացիական իրավունքին (ընդ որում, խոսքը ոչ միայն մայրցամաքային, այլև անգլոսաքսոնական իրավական համակարգերին է վերաբերում), դրանց վերաբերյալ իրավական նորմերն իրենց նախատիպը չունեն որևէ իրավական համակարգում, իսկ վերջիններիս ներմուծումը, որը, վերը նշված դատողությունների համատեքստում արդեն ձեռք է բերում արհեստականությանը բնորոշ որակ, սոսկ թելադրված էր այն մտավախությամբ, որ մշակույթի, կրթության և սոցիալական ոլորտներում գործող բաժնետիրական ընկերությունները, գտնվելով պետության

հսկողությունից դուրս, կարող էին պետության կողմից իրենց հանձնված միջոցները փոշիացնել:

Պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում հստակ իրավակիրառ պրակտիկա դեռևս չի ձևավորվել նաև գործադիր իշխանության մարմինների գործունեությունում: Բնորոշ է, օրինակ, ՀՀ կրթության և գիտության նախարարության և, օրինակ, պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող բուհերի փոխհարաբերությունում վերջինիս իրականացրած վարչարարությունը: Մի կողմից, պատճառաբանվում է, որ նշված ՊՈԱԿ-ները, ՀՀ Նախագահի 2007թ. հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի համաձայն, մտնում են նախարարության համակարգի մեջ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ դրանց գործադիր տնօրենները, տվյալ դեպքում՝ ռեկտորները, հանրային ծառայողներ են, մյուս կողմից՝ նույն այդ նախարարությունը նշված ՊՈԱԿ-ներում ստուգումներ է նախաձեռնում «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հիման վրա, ինչն արդեն ուղղակի փաստում է, որ պետական մարմինը տվյալ դեպքում փոխհարաբերվում է այնպիսի կազմակերպությունների հետ, որոնց դասական իմաստով չի համարում իր համակարգի մեջ և իր ենթակայության տակ գտնվող կազմակերպություններ:

Եթե անգամ պայմանականորեն ընդունենք, որ պետական ոչ առևտրային կազմակերպությունները կարող են վարչական մարմին համարվել, միևնույն է, խնդիրն ամբողջական լուծում չի ստանում, քանզի բաց է մնում առևտրային կազմակերպությունների հարցը:

Այսպիսով՝ վարչական մարմին է համարվում ինչպես գործադիր իշխանության ու տեղական ինքնակառավարման, այնպես էլ վարչարարություն իրականացող ցանկացած այլ պետական մար-

մին: Այսինքն՝ վարչարարության սուբյեկտ կարող են համարվել նաև դատավորները, դատախազները և այլ այնպիսի պետական մարմիններ ու պաշտոնյաներ, որոնք չեն ներառվում գործադիր իշխանության համակարգի մեջ, ինչը գործնականում բավականին տարածված է: Խնդիրն այն է, որ վարչարարություն իրականացնելու լիազորությունները, որպես կանոն, ուղղակիորեն ներառված չեն սահմանադրական լիազորությունների մեջ, ինչն արտաքուստ կարող է այն թյուր տպավորությունը թողնել, որ որոշ պետական մարմիններ կամ պաշտոնատար անձինք, թերևս գերազանցում են Սահմանադրությամբ ամրագրված իրենց լիազորությունները:

Այսպես, Սահմանադրության 103-րդ հոդվածում ամրագրված է հետևյալ նորմը. «Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա»: Գործնականում, երբ խոսքը վերաբերում է դատախազության դատավարական լիազորությունների շրջանակին, անվերապահորեն նախապատվությունը տրվում է այն դիրքորոշմանը, ըստ որի՝ հիշյալ լիազորությունները չեն կարող իրենց ծավալով որևէ կերպ գերազանցել Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունները, ինչը միանգամայն իրավաչափ է: Սակայն, երբ խոսքը վերաբերում է վարչարարության իրականացմանը, ապա նույն դատողություններն արդեն չեն կարող հիմնավորված համարվել, քանի որ վարչարարության լիազորությունները համընդհանուր են և բխում են ինչպես պետական մարմինների սահմանադրական կարգավիճակից, այնպես էլ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բնականոն հիմքերից:

Վերը շարադրված մոտեցումները, կարծում ենք, միանգամայն կիրառելի են նաև գործադիր իշխանության մեջ չներառված այլ պետական մարմինների պարագայում: Այսպես, Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ «Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ»: Այս նորմի համատեքստում, եթե վերլուծենք «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստա-

նի Հանրապետության օրենքը, ապա կնկատենք. որ այն խորհրդարանին վերապահում է բազմաթիվ լիազորություններ, որոնք, թերևս, ամրագրված չեն Սահմանադրությամբ: Այսպես, նշված օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահը մի շարք լիազորություններ է (օրինակ՝ հաստատում է Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման, ինչպես նաև Ազգային ժողովի նստավայրում մամուլի ասուլիսների, ճեպագրույցների անցկացման կարգերը, սահմանում է Ազգային ժողովի նիստերի եւ «Խորհրդարանական շաբաթ» հեռուստահաղորդաշարի հեռարձակման համար մրցույթի պայմանները և այլն) իրականացնում դրանք նախապես Ազգային ժողովում քննարկելուց հետո:

Ակնհայտ է, որ հիշյալ լիազորություններն անմիջականորեն սահմանված չեն Սահմանադրությամբ, սակայն դրանց անհրաժեշտությունը թելադրված է այդ պետական մարմնի սահմանադրական կարգավիճակով, բխում է հենց սահմանադրական լիազորությունների երաշխավորման բնականոն պահանջներից:

Այսպիսով՝ պայմանականորեն ընդունենք, որ թեպետ վերը նշված լիազորություններն անմիջականորեն ամրագրված չեն Սահմանադրությամբ, սակայն չեն հակասում տվյալ պետական մարմնի սահմանադրական կարգավիճակին, ավելին՝ բխում են դրանից: Այնուամենայնիվ, հարց է ծագում, ի՞նչ բնույթ ունեն վերը նշված լիազորությունները և ինչո՞ւ անհրաժեշտ չի համարվում Սահմանադրությունում դրանց անմիջական ամրագրումը: Հարկ ենք համարում նկատել, որ այս երկու հարցադրումները փոխկապակցված են՝ առաջին հարցի պատասխանը, թերևս, կանխորոշում է երկրորդի պատասխանը:

Խնդրո առարկա օրենսդրության համալիր վերլուծությունը թույլ է տալիս հանգելու այն եզրակացության, որ Սահմանադրությամբ ուղղակիորեն չնախատեսված լիազորությունները պայմանավորված են հիմնականում, երկու փաստարկներով՝ ա) տվյալ պետական մարմնի կազմավորման և ներգերատեսչական մյուս հա-

րաբերությունների սպառիչ կարգավորման և բ) վարչարարության բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությամբ:

Նախ, անդրադառնանք 1-ին խմբի լիազորություններին: Իհարկե, նույն այդ պետական մարմինների կազմավորման առավել առանցքային նշանակություն ունեցող հարաբերությունները կարգավորված են Սահմանադրությամբ, սակայն ակնհայտ է, որ դրանց մի զգալի հատվածը կոնկրետ պետական մարմնի կարգավիճակի հստակեցման կտրվածքով չունի սահմանադրաիրավական արժեք և հարիր չէ, որ դրանք անհրաժեշտ մանրամասնությամբ կարգավորման նյութ դառնան երկրի Հիմնական օրենքով: Տվյալ դեպքում օրենսդիրը թերևս պարտավոր է որպես ելակետ ընդունել հետևյալ չափանիշները՝ ա) օրենքով ամրագրված լիազորությունները չպետք է խաթարեն տվյալ պետական մարմնի սահմանադրական կարգավիճակի էությունը, բ) այդ լիազորությունների հիմքում պետք է դրվի համապատասխան պետական մարմնի սահմանադրական լիազորությունների ողջամիտ երաշխավորման անհրաժեշտությունը և գ) օրենքով ամրագրված լիազորությունները պետք է հնարավորինս զերծ պահեն նշված պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց այնպիսի գործառույթներ իրականացնելուց, ինչի արդյունքում կարող են առաջանալ գործառույթների և լիազորությունների տարանջատման լրացուցիչ բարդություններ:

Ասվածից, թերևս, բխում է, որ օրենսդիր, դատական իշխանության մարմինները ևս կարող են մասնակիորեն իրականացնել գործադիր իշխանությանը բնորոշ լիազորություններ, սակայն դա որևէ կերպ չի կարող հանգեցնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի խաթարմանը, ինչպես նաև նույն այդ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի սահմանադրական լիազորությունների անարգել իրականացմանը: Այսպես օրինակ՝ ինչպես ՀՀ դատական օրենսգիրքը, այնպես էլ «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքը Վճռաբեկ դատարանի նախագա-

հին վերապահում են այնպիսի լիազորություններ, որոնք, մեր կարծիքով, ոչ միայն չեն բխում դատավորի՝ որպես արդարադատություն իրականացնող պաշտոնյայի սահմանադրական կարգավիճակից, այլև անհարկի խոչընդոտում են ինչպես վերջինիս, այնպես էլ դատական ատյանների լիազորությունների բնականոն ընթացքը¹: Բերենք մի քանի այդպիսի վիճահարույց լիազորությունների օրինակներ՝ ա) վերահսկում է Վճռաբեկ դատարանի աշխատակազմի գործունեությունը (ՀՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետ), բ) «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակման է ուղարկում Վճռաբեկ դատարանի որոշումները (ՀՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ), գ) դատական դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ նշանակում և այդ պաշտոններից ազատում է դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալներին, դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին («Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ) և այլն:

Նշված լիազորությունների անհրաժեշտությունն ինքնին վիճահարույց չէ, խնդրահարույց է դրանք դատավորին վերապահելը, այն էլ՝ բարձրագույն դատական ատյանի նախագահին: Մասնավորապես, վերջինս ոչ միայն իր կարգավիճակով ու զբաղվածությամբ

¹ Առավել հանգամանորեն հիշյալ խնդիրը հետազոտության նյութ է դարձել հետևյալ աշխատությունում՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք / խմբ. Հ.Թովմայան, Օ.Լուխթերիանդ, Գ.Մուրադյան, Վ.Պողոսյան, Վ.Ռայմերս, Ռ.Ռուբել. - Եր.: Բավիդ, 2011, էջ 103-112, ինչպես նաև՝ հեղինակի նշված աշխատությունում՝ Գ.Դանիելյան, Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ / Երևան: Տիգրան Մեծ, 2011, էջ 26-29: Հավելենք, որ օրենսդրական զարգացումները դեռևս չեն նպաստում, որպեսզի հիշյալ պետական մարմիններն ու դատական ատյանները զերծ մնան իրենց սահմանադրական կարգավիճակի անհարիր գործառույթներից ու լիազորություններից:

աստիճանով ի գորու չէ արդյունավետ իրականացնել աշխատակազմի ղեկավարին բնորոշ գործառնություններ, այլն առնվազն դրանով իսկ խաթարվում է վերջինիս կողմից կայացված վարչական ակտերի, գործողության կամ անգործության դատական կարգով բողոքարկման տրամաբանությունը: Հայրենական իրավական համակարգին դեռ մի քանի տարի առաջ ծանոթ էր տարաբնույթ վարչական մարմիններում, այդ թվում՝ Վենտրոնական ընտրական հանձնաժողովում դատավորներին ներգրավելու պրակտիկան, սակայն, բարեբախտաբար, դրանք ողջամտորեն անհիմն համարվեցին ու աստիճանաբար վերանայվեց նշված խոցելի պրակտիկան, սակայն, ինչպես երևում է, խնդիրն ամբողջովին դեռևս լուծված չէ՝ հավանաբար, գերակայում են իրավական մշակույթի որոշ կարծրատիպեր:

Մյուս կողմից ակնհայտ է, որ նույն Վճռաբեկ դատարանի նախագահը և գործադիր իշխանության մեջ չմտնող բազմաթիվ այլ պաշտոնյաներ անխուսափելիորեն պետք է օժտված լինեն այնպիսի նվազագույն լիազորություններով, որոնք, չխաթարելով վերը նշված նախապայմանները, միտված կլինեն սահմանադրական կարգավիճակի երաշխավորմանը: Օրինակ՝ միանգամայն իրավաչափ են ընկալվում այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են՝ Վճռաբեկ դատարանի դատավորներին օրենքով սահմանված կարգով արձակուրդ տրամադրելը (ՀՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ), Վճռաբեկ դատարանն այլ մարմինների հետ հարաբերություններում ներկայացնելը (ՀՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետ) և այլն:

Այժմ անդրադառնանք 2-րդ խմբի լիազորություններին. սրանք այն լիազորություններն են, որոնք դասական իմաստով վերաբերում են վարչարարության իրականացմանը: Այս լիազորությունների իրականացմամբ գործադիր իշխանությանը չպատկանող պետական մարմիններն ընդունում են արտաքին ներգործության իրավական ակտեր (վարչական ակտեր) և իրականացնում են այդպիսի գործունեություն:

Ընդհանուր առմամբ երկրորդ խմբի լիազորությունները, մեր կարծիքով, սահմանազատվում են առաջին խմբի լիազորություններից, հիմնականում այն հիմքով, որ վերջիններս թելադրված են ոչ այնքան տվյալ պետական մարմնի սահմանադրական կարգավիճակի բնականոն իրացմամբ, որքան անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանվածության երաշխավորմամբ: Այսպես, Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավունքների ու ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իր իրավունքը: Սահմանադրության մեկ այլ՝ 30.2.-րդ հոդվածով ամրագրված է. «Քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք»: Նշված և մի շարք այլ սահմանադրական նորմերի վերլուծությունից բխում է, որ անձանց սահմանադրական լիազորություններն անխտիր բոլոր պետական մարմինների համար առաջացնում են որոշակի պարտավորություն, ինչը գործնականում, հիմնականում, դրսևորվում է վարչարարության իրականացմամբ:

Այսպես օրինակ՝ եթե բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող և դատախազ նշանակվելու համար մյուս այլ պայմաններին բավարարող անձը դիմում է հանրապետության գլխավոր դատախազություն՝ դատախազ նշանակվելու համար, ապա դատախազության իրավասու պաշտոնյան չի կարող պատճառաբանել, որ այդպիսի դիմում չի կարող քննարկել, քանի որ Սահմանադրության 103-րդ հոդվածով դատախազության լիազորությունները սպառիչ են սահմանված, իսկ ամրագրված լիազորությունների ցանկում բացակայում է դատախազության համակարգ աշխատանքի անցնելու վերաբերյալ դիմում քննարկելու, առավել ևս՝ դատախազի պաշտոնում նշանակելու լիազորություն: Բնական է, որ Սահմանադրության 103-րդ հոդվածն սպառիչ է սահմանում դատախազության՝ որպես ինքնուրույն սահմանադրական գործառնություն իրականացնելու

համար պատասխանատու պետական մարմնի լիազորությունները, սակայն դատախազությունը, լինելով պետական մարմին, ևս կրում է անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների բնականոն իրացման ու պաշտպանության պատասխանատվությունը¹:

Այժմ անդրադառնանք վարչարարության հաջորդ ասպեկտին, կապված այդ ոլորտում քաղաքացիների և իրավաբանական անձանց, հատկապես, դատական պաշտպանության հետ: Չանդրադառնալով վարչարարության ոլորտում անձանց խախտված իրավունքների դատական պաշտպանության առանձնահատկությունների անհրաժեշտությունը (դա համարում ենք այլ թեմատիկ հետազոտության նյութ)²՝ քննարկենք դրանց շրջանակները և հանրային բնույթի այլ հարաբերություններում դրանց կիրառման հնարավորության հարցը:

Նախ, պայմանավորված այն իրողությամբ, որ վարչարարություն իրականացնում են բացառապես հանրային իշխանությամբ օժտված պետական մարմիններն ու տեղական ինքնակառավարման մարմինները, ելակետ է ընդունվել այն դիրքորոշումը, ըստ որի՝ վարչական դատավարությունում հարկ է սահմանել ընդհանուր կանոնից տարբերվող ապացույցներ ներկայացնելու պարտականություն և ապացուցման բեռ: Մասնավորապես, ինչպես նախկին, այնպես էլ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը վարչական մարմինն պարտավորեցնում են ներկայացնելու ոչ միայն իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները, այլև տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնք

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 20101, էջ 100-1001:

հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:

Ի դեպ, այս և նմանաբնույթ այլ կանոնները հիմք են տվել ինչպես իրավագիտության, այնպես էլ օրինաստեղծ գործունեությունում ելակետ ընդունելու այն դիրքորոշումը, ըստ որի՝ վարչական դատավարությունում մրցակցության սկզբունքը չի գործում: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Դատական քննությունը, *բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի* (ընդգծումը մերն է), մրցակցային է», իսկ արդեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի, մրցակցության սկզբունքը չի ճանաչվում որպես դատավարության սկզբունք: Իրավագետներից շատերը հակված են այն տեսակետին, որ մրցակցության սկզբունքը բնորոշ է նաև վարչական դատավարությանը, սակայն դրսևորվում է որոշ անխուսափելի վերապահումներով³:

Չխորանալով հիշյալ բանավեճի մեջ՝ նպատակահարմար էմ գտնում սոսկ նկատել, որ մրցակցության, ինչպես և կողմերի իրավահավասարության սկզբունքներն անվերապահորեն գործում են նաև վարչական դատավարությունում, դրանք ունեն որոշակի դրսևորման առանձնահատկություններ: Թերևս, առավել իրավաչափ կլիներ այն մոտեցումը, ըստ որի՝ մրցակցության կամ կողմերի իրավահավասարության սկզբունքները երաշխավորվում են ոչ թե կողմերի համար նույնական կարգավիճակ սահմանելով, այլ վերջիններիս փաստացի հնարավորությունների հաշվառմամբ այնպիսի կանոններ ամրագրելով, որի արդյունքում կողմերը փաստացի (դե ֆակտո) դառնում լիարժեք իրավահավասար:

Ինչևէ, կոնկրետ մեր կողմից քննարկվող նյութը վերաբերում է ոչ այնքան մրցակցության ու իրավահավասարության սկզբունքներին:

³ Այս հարցն առավել հանգամանորեն վերլուծված է Գ.Դանիելյանի վերը նշված աշխատությունում, էջ 165-174:

րի՝ դասական իմաստով բովանդակության բացահայտմանը, որքան՝ այն իրողությանը, որ անկախ այդ սկզբունքների իրավական արժեքից ու բովանդակությունից, վարչական դատավարությունում դրանց արդյունքում ապացուցման բեռն անհամեմատ զգալի է դառնում վարչական մարմինների համար: Որոշ օրինակների մենք արդեն այլ կտրվածքով անդրադարձանք, հավելենք միայն, որ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածով միայն մի դեպքում է ապացուցման բեռը վերապահված ֆիզիկական կամ իրավաբանական անձին. խոսքը ճանաչման հայցով որևէ իրավա-հարաբերության առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստերի մասով ապացույցներ ներկայացնելու պարտականության մասին է: Կարծում ենք՝ ասվածն ամբողջականացնելու նկատառումով նպատակահարմար է նաև նշել, որ վարչական դատավարությունում ընդունված է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե դատարանի կողմից պարզելու պարտականությունը («ex officio»). այս նորմն ամրագրված է հիշյալ օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մաս:

Ինչ խոսք, հանրային իշխանության մարմինների պարագայում վերը նշված առանձնահատկությունները, որոնք լրացուցիչ բեռ են նախատեսում վարչական մարմինների համար՝ որոշակի արտոնություններ սահմանելով ֆիզիկական և իրավաբանական անձանց կտրվածքով, հիմնավորված են և բխում են փաստացի (դե ֆակտո) իրավահավասարություն երաշխավորելու անհրաժեշտությունից: Մակայն ներկայումս առայժմ իրավաստեղծ գործունեության շրջանակներում ընթացող զարգացումները, թերևս, ցույց են տալիս, որ անհարկի «հրապուրանք» կա այդ ինստիտուտի նկատմամբ, որ դրա իրավական արժեքն ու նշանակությունն ակնհայտ անհիմն գերազնահատված է, ինչն էլ ուղեկցվում է նաև խնդրին առնչվող սահմանադրաիրավական հիմքերի անտեսմամբ: Ընդհանրապես, հիշյալ բնույթի «հրապուրանքը» այս կամ այն չափով բնորոշ է եղել նաև արտասահմանյան երկրների իրավական մշակույթին, սակայն

նախապատվությունը, այնուամենայնիվ, տրվել է վարչական մարմինների վրա իրավաչափ բեռ դնելու տարբերակին¹:

Այսպես, ներկայումս կառավարությունում շրջանառության մեջ դրված օրինագծով, որով նախատեսվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով վերանայել «վարչական մարմին» եզրույթը և դրանում ներառել նաև, այսպես կոչված, «հանրային մարմինները», մեր համոզմամբ, ոչ միայն խնդրի լավագույն լուծումը չէ, այլև անխուսափելիորեն աղերսներ է ունենալու Մահմանադրության հետ: Տվյալ դեպքում, կարծում ենք, համարժեք չի ընկալվել «հանրային» եզրույթը:

Ընդ որում, իրավակիրառ հարթությունում ձևավորված իրավական մշակույթը դեռևս հնարավորություն չի ընձեռում համարժեք ընկալել այդ եզրույթի համակցմամբ կազմված տարբեր այլ եզրույթներ ևս: Այսպես՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ տվյալ օրենքի. «... գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա»: Նկատենք, որ նույն օրենքի 3-րդ հոդվածով բացահայտված է «հանրային նշանակության կազմակերպության» հասկացությունը. «... սպրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ»:

Այսպիսով՝ քաղաքացիների սահմանադրական իրավունքների պաշտպանության կոնկրետ մի հատվածում օրենսդրությունը ե-

¹ Առավել հանգամանորեն այս հարցին անդրադարձ կա հետևյալ մենագրությունում՝ Luchaire F. Le Conseil Constitutionnel. էջ 53-78:

լակետ է ընդունել այն, որ ոչ պետական կազմակերպությունները տեղեկատվություն տարածելու կտրվածքով ունեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ միանգամայն համահավասար պարտականություններ: Ընդ որում, ինչպես արդեն նկատեցինք, իրավակիրառ պրակտիկայում ևս «հանրային նշանակության կազմակերպություն» եզրույթը միանշանակ չի ընկալվում: Այսպես, թեպետ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածից հստակ բխում է, որ այդպիսին կարող են հանդիսանալ միայն տնտեսական, առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները, դատական պրակտիկայում այդպիսիք են համարվել նաև կուսակցությունները: Մասնավորապես, «Ինֆորմացիոն ազատության մասին» ՀԿ-ի հայցի հիման վրա Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2012թ. դեկտեմբերի 21-ի վճռով «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը պարտավորեցրել է տեղեկատվություն տրամադրել նշված ՀԿ-ին՝ նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար ծասխված գումարների վերաբերյալ: Տվյալ դեպքում տեղեկատվություն տրամադրելու պարտականությունն օրենքի ուժով վերապահված է եղել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ինչն էլ և սահմանված կարգով արվել է, սակայն ՀԿ-ն, այնուամենայնիվ, ելակետ է ընդունել այն, որ տվյալ գործով կուսակցությունը հանրային նշանակության մարմին է և ևս պարտավոր է տեղեկատվություն տրամադրել: Ընդ որում, այս գործով դիմողը 2013թ. նոյեմբերի 13-ին դիմել էր Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Տեղեկատվական ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 4-րդ մասի, 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանադրականությունը:

Ինչևէ, չխորանալով «հանրային նշանակության մարմին» եզրույթի ընկալման խնդիրների մեջ, նկատենք միայն, որ ներկայումս միանգամայն իրավաչափորեն հասունացել է այն տեսակետը, ըստ որի՝ այդպիսի մարմինների հետ փոխհարաբերությունում ֆիզիկական և իրավաբանական անձինք պետք է ունենան դատական պաշտպանության առավել հուսալի իրավական հիմքեր, քան դրանք նախատեսված են քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ:

Սակայն դրա լավագույն լուծում չեն կարող համարվել այդ կազմակերպությունների իրավական ակտերը, գործողություններն ու անգործությունը վիճարկելու վերաբերյալ գործերը վարչական դատավարության առարկա համարելը, ինչը ներկայումս փորձում են անել. դա կլինի չափազանց պարզունակ, սակայն ակնհայտ անհիմն լուծում: Ընդհանրապես, հասարակական կյանքում ծագած բարդությունների, հիմնախնդիրների լուծումը դատավարության այս կամ այն տեսակին բնորոշ ինստիտուտների մեջ փնտրելը և արտաքուստ պատրաստի լուծումներ առաջադրելը միշտ չէ, որ կարող է արդարացի ու հիմնավորված լինել¹:

Ցավոք, այդ «փորձը» մենք արդեն իրողություն կարող ենք համարել: Բնորոշ է դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթում այնպիսի բաղադրիչների ներառումը, որը հնարավորություն տվեց պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հայցով դատարան դիմել նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց: Տվյալ դեպքում մեխանիկորեն ընդօրինակվեց քրեական դատավարությունում միանգամայն իրավաչափ ճանաչված մասնավոր մեղադրանքի ինստիտուտը: Սակայն, եթե քրեական դատավարությունում այս ինստիտուտի կիրառումն իրավաչափ է, քանի որ անձն ինքն է նախաձեռնում իր անձնական, մասնավոր շահերի

¹ Տե՛ս Nadjati Z. M. Administrative Law. Nicosia, 1974. էջ 151-152:

պաշտպանությունը, ապա բացարձակապես իրավաչափ չէ վարչական դատավարության պարագայում, քանզի խոսքը բացառապես հանրային հարաբերություններում հանրային շահերի պաշտպանության մասին է՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով հանդերձ: Մասնավորապես, որևէ ողջամիտ բացատրություն չի կարող տրվել այն հարցին, թե ինչո՞ւ պաշտոնատար անձի կողմից թույլ տված այնպիսի վարչական զանցանքը, որը բացարձակապես չի հանգեցրել տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնավոր իրավունքների խախտմանը, կարող է դատական կարգով քննարկման առարկա դառնալ նույն այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցով, ինչո՞ւ պարզապես նույն այդ անձինք չեն կարող համապատասխան միջնորդությամբ դիմել իրավասու հանրային իշխանության մարմիններին, որպեսզի վերջիններս իրենք նախաձեռնեն վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ:

Այսպիսով՝ այսպես կոչված, «հանրային նշանակության մարմինները» պարզապես վարչական մարմին համարելն ու դրանց կողմից թույլ տված խախտումները վարչական դատավարության կարգով քննության առարկա դարձնելը չեն կարող իրավաչափ համարվել: Անվիճելի է, որ նշված կազմակերպությունները ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, որպես կանոն, ընկալվում են որպես հանրային իշխանության մարմիններին բնորոշ լիազորություններով ու կարգավիճակով գործող սուբյեկտներ, սակայն դա բնավ չի կարող նշանակել, որ հենց այդ պահից վերջիններս ձեռք են բերում վարչական մարմնի կարգավիճակ, և պարզապես կարելի է «օրինականացնել» ստեղծված իրավիճակը:

Ամփոփելով ողջ վերը շարադրվածը, վերլուծելով խնդրին առնչվող հիմնահարցերը՝ առաջադրում ենք հետևյալ եզրահանգումները: Այն, որ հանրային նշանակություն ունեցող կազմակերպությունների գործունեության բնույթն այնպիսին է, որ պարզապես հնարավոր չէ մասնավոր սուբյեկտների հետ փոխհարաբերություն-

նում ապահովել լիարժեք քաղաքացիաիրավական հարաբերություններ, ակնհայտ է, սակայն իրավաչափ եղանակը ոչ թե վերջիններիս վարչական մարմնի կարգավիճակ վերապահելն է, այլ դրանց կողմից իրավունքների խախտման կամ անմիջական խախտելու սպառնալիքի պարագայում իրավունքների պաշտպանությունը վարչական դատավարության կանոններով իրականացնելն է: Ընդ որում, հարկ կլինի պարզապես որոշակի առանձնահատկություններ սահմանել քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ: Հավելենք, որ այս խնդրի առնչությամբ այլընտրանքային տարբերակներ փնտրելը բնավ նորույթ չէ, այն իր արտացոլումն է ստացել նաև նախորդ դարի սկզբներին հրատարակված մենագրություններում¹:

Հաճախ է խոսվում նաև հանրային նշանակության կազմակերպությունների առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների ընդլայնման մասին, մասնավորապես ենթադրվում է, որ իրավաչափ կարող է համարվել նաև վերը նշված իրավունքների խախտման փաստերի քննության ու ներգործության լիազորությունները վերապահել Մարդու իրավունքների պաշտպանին: Կարծում եմ, այդ դատողությունները թեև իրենց նպատակով արդարացի են, սակայն չեն բխում հիշյալ ինստիտուտի էությունից, իսկ վերը նշված առաջարկությունների համատեքստում, թերևս, այդ խնդիրը ևս կորցնում է իր հրատապությունը:

Բնականաբար, հիշյալ եզրահանգումները վերը նշված հիմնախնդիրների իրավական հարթությունում սպառնիչ լուծում չեն ապահովում, սակայն սրանք այն ելակետային դիրքորոշումներն են, որոնք կանխորոշում են ողջ իրավական կարգավորման համակարգը, որի առանձին բաղադրիչները կարող են հստակեցվել օրինագծերի մշակման աշխատանքներն իրականացնելիս:

¹ Ст' у Елистратов А. И. Очерк административного права. М., 1922. էջ 89-101:

КОНЦЕПТУАЛЬНЫЕ АСПЕКТЫ ПЕРЕСМОТРА ГРАНИЦ АДМИНИСТРИРОВАНИЯ

Геворг Даниелян
*Заведующий кафедрой конституционного права ЕГУ,
председатель совета «Центра конституционного права»,
доктор юридических наук, профессор*

В данной статье исследованы новые аспекты, связанные с пересмотром границ администрирования, которые раскрывают наличие элементов администрирования в деятельности негосударственных организаций публичного значения, а также правовые рычаги адекватного противопоставления этому явлению.

В статье высказано мнение, согласно которому некоторые частные организации, имевшие в экономической сфере монопольную и превалирующую позицию, в гражданско-правовых отношениях с многочисленными клиентами, по сути, не выступают как равноправные стороны. Дело в том, что данные организации в одностороннем порядке принимают правовые акты, которые непосредственно касаются прав и законных интересов юридических и физических лиц, находящихся с такими организациями лишь в гражданско-правовых отношениях. При этом, принятию таких правовых актов способствует также действующее гражданское законодательство, поскольку в указанных случаях законодатель данные организациям предоставил широкие полномочия устанавливать новые условия договоров.

Автор, рассмотрев проблему защиты прав человека в указанной сфере, критикует подходы, закрепленные в законопроекте по инициативе государственных органов, согласно которым частные организации, имеющие публичное значение, в административно-процессуальных отношениях на суде могут выступить в качестве административных органов. Автор высказывает мнение, что такой подход, по сути, не только не решает проблемы, но и углубляет их, поскольку защита прав человека становится более уязвимой. По мнению автора, более обоснованным является следующий вариант: физические и юридические лица продолжают защищать свои права в гражданском суде, однако по правилам административно-процессуального законодательства.

CONCEPTUAL ISSUES OF REVISING THE ADMINISTRATION LIMITS

Gevorg Danielyan
*Doctor of Legal Sciences, Professor
Head of the YSU Chair Of Constitutional Law,
Chairman of the Board of «Constitutional Law Centre» NGO*

Current article revises the contemporary issues of the administration limits that disclose the actual presence of administration elements in the functioning of public non-state organizations, as well as the legal regulation of those issues.

According to this article, in the sphere of economy, some major monopolist organizations do not appear as an equal party of a civil relationship with the majority of customers. The problem is that the mentioned organizations unilaterally adopt legal acts which directly impact the interests of their customers. Moreover, the adoption of such legal acts is supported by the current civil legislation, as in such cases the legislative reserves unnecessarily wide jurisdiction for the organizations to define the conditions of contracts.

The author, while referring to the customers' rights protection issues, criticizes the approach of the state competent bodies when they equalize the mentioned organizations and administrative bodies in the context of administrative litigation. The author points out that this approach will deepen the already existing controversy. The suggestion is to revise the status of those organizations, and at the same time, to establish norms that would allow appealing legal acts adopted during the mentioned activity in civil litigation. Those norms should be similar to the ones that regulate the appealing process in administrative litigation.

Բանալի բառեր՝ վարչարարություն, վարչարարության սահմաններ, վարչական դատավարություն, վարչական կարգ, հանրային իշխանություն, հանրային իշխանության մարմիններ, հանրային նշանակության մարմիններ, հանրային ծառայություն իրականացնող մարմիններ, կորպորատիվ կառավարման մարմիններ:

Ключевые слова: администрирование, границы администрирования, административное судопроизводство, административный порядок, общественная власть, органы общественной власти, органы общественного значения, органы, осуществляющие общественную службу, органы корпоративного правления.

Key words: administration, administration limits, administrative litigation, administrative order, public authorities, public authority bodies, public bodies, public service bodies, corporate governance bodies.

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԻԶՄԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վարդան Այվազյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավ. գիտ. թեկնածու*

Գլոբալացման ձևաչափով ընթացող ինտեգրացիոն գործընթացների աննախադեպ արագացումը առաջացնում է մի իրավիճակ, որում աշխարհն ամբողջությամբ վերցրած փաստացի անցնում է գործառնավորման միանգամայն նոր մակարդակի՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական, միգրացիոն և այլն, և համապատասխանավար խնդիր է առաջանում պոստ ֆակտում վերակազմակերպել նոր համաշխարհային իրավակարգի կառավարման համակարգն ու իրավական ամրագրում տալ արդեն գործող աշխարհակարգի նոր դասավորվածությանը՝ խնդիր դնելով այն իրավական կարգավորման համարժեք տրամաբանությամբ տեղափոխել համաշխարհային իրավակարգի համակարգ: Այս պարագայում առանցքային է դառնում գլոբալացման այնպիսի հայացեկարգը, որը պետք է հստակ արտացոլի առաջ ընթացող տրանսնացիոնալիզմի ընթացիկ վիճակը, որն իր մեջ ներառում է ինտեգրացիոն գործընթացի բաղադրիչները և իրավունքի ծագումնաբանության հիմնարար գործոնները, որոնց առնչությամբ միջազգային իրավունքի և նրա ինստիտուտների արդյունավետությունն ու համարժեքությունը պետք է ենթարկվեն մանրակրկիտ ստուգման ու ճշտման: Դա այն էմպիրիկ համատեքստի անքակտելի մասն է, որում միջազգային իրավունքը, դեռևս գտնվելով դոկտրինալ հիմքի վրա, ստանում է իր հիմնական ազդակները: Այնքանով, որքանով պետությունը անտեսում կամ հարկադրաբար հրաժարվում է սեփական քաղաքացիների ընդհանուր շահերի երաշխավորի իր դերակատարությունից, այդ կորստի հատուցման համար պետք է ունիվերսալ կամ տարածաշրջանային մակարդակում ստեղծվեն ընդ-